

ԳՐԱԿԱՆ ՅՈՒՓԵՐ

«ԳՐԱԿԱՆ ՅՈՒՓԵՐ»-ու շարքը — որու ղեռ առաջին ութը հատորները ըստ տեսած են,

Ա Լ Ի Շ Ա Ն

ՎԱՐՈՒԺԱՆ

ԹՈՒՄԱՆԵԱՆ

Դ Ո Ւ Ր Ե Ա Ն

ԶԱՐԴԱՐԵԱՆ

սխալի կազմէ ամէնէն ճոխ եւ ամէնէն կատարեալ մատենադարանը մեր տոհմային նոր Գրականութեան:

Ամէն Հայ պէտք է սիրով ողջունէ Մխիթարեան Միաբանութեան զոհաբեր ճիւղերով կազմուած այս գերդնահատելի մեծ եւ կարեւոր ձեռնարկը, որ այլեւս ամենամեծ դիւրութիւնը սխալի տայ Հայ աշակերտութեան ու ամբողջ ընթերցասէր հասարակութեան՝ աժանագին հատորներու մէջ ճանչնալ մեր Արեւելահայ թէ Արեւմտահայ սիրուած ու փնտռուած բոլոր հեղինակները՝ Ալիշանէն ու Աբովեանէն մինչեւ Վարուժան, մինչեւ Տէրեան եւ մինչեւ նորագոյն ընտիր դէմքերը, քերթող ու արձակագիր, իրենց զրական բոլոր սեռերու ընտիր նըմոյշներով:

Մէն մի հատոր — Էւրոպական մեծ աղբիւր նոյնօրինակ ձեռնարկներու ոճը որդեգրած — պատրաստուած է հեղինակներու կեանքին ու զործին խնամոտ ուսումնասիրութեամբ, վերլուծումով եւ կարեւոր դատուած ծանօթագրութիւններով:

Գործին յաջողութեան եւ արժէքի երաշխիքը կը կազմէ Հրատարակիչ Յանձնախումբը՝ կազմուած ընդհանրապէս Գրականութեան նուիրուող Հայրերէ, որոնք միանգամայն ունին հմտութիւն եւ երկարամեայ փորձը նոյն մասնաճիւղի դատաւանդութեան:

Մէն մի հատոր շուրջ 100 էջ, մաքուր թուղթի վրայ ընտիր տպագրութիւն՝ ճոխացած հեղինակին պատկերով: